

# ԻՆՉՊԵՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ COVID-19-Ի ԹԵՍ

Լոս Անջելեսի Շրջանում կան COVID-19-ի թեստ ձեռք բերելու բազմաթիվ տարբերակներ:



## Ձանգահարեք ձեր բժշկին:

- Նկարագրեք ձեր ախտանիշները՝ որոշելու համար՝ արդյոք ձեզ անհրաժեշտ է թեստ:
- Խոսեք ձեր բժշկի հետ՝ ժամադրություն նշանակելու համար:



## Չարցրեք ձեր դպրոցում կամ գործատուին:

- Շատ դպրոցներ և աշխատատեղեր առաջարկում են անվճար թեստավորում աշակերտներին և աշխատակիցներին:



## Այցելեք Լոս Անջելեսի Շրջանի՝ ձեզ մոտիկ գտնվող թեստավորման կենտրոնը:

- Ձանգահարեք 211, տեքստային հաղորդագրություն ուղարկեք 844-833-1334 համարին, կամ այցելեք [covid19.lacounty.gov/testing](https://covid19.lacounty.gov/testing) կայքէջ՝ ձեզ մոտիկ անվճար ՊՇՌ-թեստավորման կենտրոն գտնելու համար:
- COVID-19-ի թեստավորումն անվճար է Լոս Անջելեսի Շրջանի բոլոր վայրերում՝ անկախ ներգաղթի կարգավիճակից կամ ապահովագրությունից:
- Ժամադրությունները խստորեն խորհուրդ են տրվում:



## Օգտվեք Տնային Թեստավորման Ծրագրից

- Գրանցվեք, որպեսզի ձեզ փոստով ուղարկեն անվճար ՊՇՌ-թեստի պարագաները՝ [covid19.lacounty.gov/testing/home-test-collection-program/](https://covid19.lacounty.gov/testing/home-test-collection-program/):
- Թեստը կատարեք տանը և այն փոստով ետ ուղարկեք՝ ձեր արդյունքները ստանալու համար:



## Վճարեք տնային պայմաններում կատարվող հակազենի արագ թեստի համար

- Արագ թեստերը կարելի է գնել դեղատներում, մանրածախ խանութներում և ձեզ մոտիկ գտնվող այլ վայրերում:
- Եթե դուք վճարում եք արագ թեստի համար, պահպանեք ձեր կտրոնը: Հնարավոր է, որ կարողանաք փոխհատուցում ստանալ ձեր բժշկական ապահովագրության միջոցով:



## Այցելեք Շրջանի կողմից չդեկլարվող թեստավորման կենտրոն

- Որոշ կենտրոններ դեկլարվում են մասնավոր ընկերությունների, մասնավոր առողջապահական համակարգերի կամ քաղաքների տեղական իշխանությունների կողմից:
  - Այդ կենտրոնները չեն դեկլարվում Լոս Անջելեսի Շրջանի կողմից և նրան չեն պատկանում:
- Նրանք կարող են ձեզնից գումար գանձել թեստի համար: Հարցրեք՝ արդյոք կան լրացուցիչ գանձումներ կամ վճարներ:
- Նրանք կարող են նաև տեղեկություններ պահանջել, ինչպիսիք են անձը հաստատող պետական փաստաթուղթը կամ ապահովագրությունը:

**Եթե ունեք ախտանիշներ կամ շփվել եք վարակակրի հետ, հնարավորինս շուտ հանձնեք COVID-19-ի անվճար թեստ:**

**ԽՈՒՍԱՓԵՔ COVID-19-Ի ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Եթե կարծում եք, որ գտել եք COVID-19-ի կեղծ շարժական կենտրոն կամ գնել եք COVID-19-ի կեղծ տնային թեստ, խնդրում ենք հայտնել այդ մասին Սպառողների և Բիզնեսների Հարցերով Բաժին՝ [bit.ly/DCBAHelp](https://bit.ly/DCBAHelp) հասցեով կամ գանգահարել (800) 593-8222 հեռախոսահամարով:

